

Վրաստանում գործում է հասարակական տեղեկատվության վիճակագրական կայք

Մարտ 27, 2011

Վրաստանում գործում է հասարակական տեղեկատվության վիճակագրական կայք

Վրաստանում սկսել է գործել GiveMeInfo անունը կրող նոր կայքը, որի նպատակը հասարակական տեղեկատվության հոսքը ավելի բաց դարձնելն է:

Կայքի ստեղծման մտահաղացումը վրացի լրագրող Դավիթ Չագանավաինն է: Անցյալ տարի Թբիլիսիում այս նախագծով նա Կովկասի սոցիալական նորամուծությունների ճամբարի հաղթող ճանաչվեց: Շահած գումարի և Վրաստանի բաց հասարակություն հիմնադրամի ֆինանսական աջակցության շնորհիվ <http://givemeinfo.ge> [1] կայքը դարձավ իրականություն:

Կայքի բովանդակությունը լրացնում են հենց օգտվողները՝ նրանք, ովքեր առավել հաճախ հասարակական տեղեկատվության կարիք ունեն, մասնավորապես, լրագրողները և ՀԿ-ների ներկայացուցիչները: Մուտքագրվող տեղեկությունները գաղտնի են: Տեղեկություն ստանալու համար պահանջվում է պատասխանել հայցադիմումի մի քանի հարցի:

«Կայքը ցույց կտա, թե ինչպես են տարբեր գործակալություններ և նախարարություններ զբաղվում հասարակական տեղեկատվության հոսքով: Այն տեղեկատվության հոսքը պատկերող քարտեզի կնամանվի: Դեռ ոչ բոլորը գիտեն կայքի մասին, այդ պատճառով տեղեկատվությունը դեռ շատ չէ: Չգիտես՝ ինչու, շատերը մտածում են, որ գործընթացը ժամանակատար է, մինչդեռ այն մի քանի րոպե է տևում», - ասել է Դավիթ Չագանավան Media.ge [2] կայքին:

Թեմատիկ նյութեր

[Գրիգոր Ամալյան. «Սարք ունենալ-չունենալը դիտեք որպես սեփական հայեցողություն. ոչ թե իրավունքի սահմանափակում»](#) [3]

[2012 թվականի ղնթացքում LՀԱ-ի իրականացրած հետազոտությունները](#) [4]

[LՀԱ-ի ծրագրող One World Social Innovation միջազգային մրցույթի լավագույնների շարքում](#) [5]

[Ditaket.am: Հաշմանդամ աղջկա երագանքն իրականություն դարձավ](#) [6]

[Irazek.am ղնտրական ուղեցույցում քաղաքացիների հաղորդագրությունների վերլուծություն](#) [7]

Source URL: <http://www.jnews.am/node/969>

Links:

[1] <http://givemeinfo.ge/>

[2] <http://www.media.ge/en/node/40668>

[3] <http://www.jnews.am/interview-with-grigor-amalyan>

[4] <http://www.jnews.am/jff-studies-2012>

[5] <http://www.jnews.am/jff-project-on-one-world-social-innovation-award>

[6] <http://www.jnews.am/mane-asryan>

[7] <http://www.jnews.am/research-result-of-voters-complains-on-irazek>